

Վթարի պարագային

ձեր հեռախօսը գործածեցեք միայն վթարին վերաբերող հարցերուն մասին տեղեկութիւն տալու եւ ստանալու: Ձեր քաղաքի յայտարարութիւնները լսեցեք եւ լուր ունեցեք ձեր սիրեցեալներուն մասին:

Սակայն մի մոռնաք հեռաձայնային ձեր խօսակցութիւնը կարճի կապելու, որպէսզի ուրիշներն ալ առիթը ունենան հեռախօսի ծառայութենէն օգտուելու:

Ահաւասիկ ձեզ մտածել տալու կարգ մը կէտեր:



California Public Utilities Commission

Telecommunications Education and Assistance in Multiple-Languages (TEAM) Program

www.cpuc.ca.gov/team-and-changes

cabteamandchanges@cpuc.ca.gov

If you are not able to resolve your dispute with your service provider, call the Consumer Affairs Branch (800) 649-7570

Հեռախօսի

Գործածութիւնը

Վթարներու Պարագային

CALIFORNIA
PUBLIC
UTILITIES
COMMISSION



Հեռախօսի Գործածութիւնը Վթարներու Պարագային



911

Ձեր հեռախօսը կրնայ ձեր կեանքը փրկող կազմած մը ըլլալ: Կրնաք զայն գործածել օգնութիւն ինդրելու կամ այդ գծով այլոցմէ լուր ստանալու համար:

Սակայն, երբ հարցը վթարի մը կը վերաբերի՝ վթարի տեղն ու շուրջը գտնուողները պէտք չէ որ իրենց հեռախօսները անէնդհատ գործածեն: Նման ցուցմունքի ենթարկուելով, մարդիկ հեռախօսի գիծերը վթարներու համար բաց պահելու կ'օգնեն, ներառեալ հրշէջներուն ու ոստիկանութեան հեռաձայնելու, որպէսզի անոնք անմիջապէս շտապէն վթարի վայրը:

Ոչ մէկ հեռաձայնային ընկերութեան գիծերը կրնան բնական բանիլ երբ բոլորս ուզենք միեւնոյն ատեն հեռաձայնել: Պէտք է նաեւ նկատի ունենանք, որ վթարներու ժամանակ հեռաձայնի գիծերը կրնան վնասուիլ: Հետեւաբար, լաւ կ'ըլլայ որ սիրելիներուդ հետ հաղորդակցելու այլ միջոց մը ունենաք:

Պատրաստ եղէք էլեքտրականութեան անջատումի

- Գնեցէք Battery-ներով գործող ձայնասփիւռի կազմած մը, որպէսզի վթարներու պարագային կառավարութեան յայտարարութիւնները լսէք նոյնիսկ երբ էլեքտրական հոսանքը կտրուած ըլլայ: Մի՛ մոռնաք յաւելեալ Battery-ներ ունենալ ձեր մօտ:
- Անթել “Cordless” հեռաձայնները էլեքտրական հոսանքի կարիքը ունին բանելու համար: Անոնք բանելէ կը դադրին երբ հոսանքը կտրուի վթարի մը հետեւանքով: Ունեցէք պարզ հեռաձայնի կազմ մը, որ էլեքտրական հոսանքի հետ կապ չունի:
- Եթէ ձեր հեռաձայնի ծառայութիւնը ինթըրնէթի կամ քէյպլի միջոցաւ է այդ ծառայութեան հետ եկած battery-ն, որ քանի մը ժամ կը բանի հոսանքի կտրուելէն ետք: Երկրորդ battery մը գնեցէք եւ միշտ լեցուն պահեցէք զայն՝ վթարներու պարագային գործածելու համար:

Գտէք եթէ ձեր քաղաքը կամ գաւառը վթարի պարագային իմաց տալու դրոյթ մը ունի՞, որ վթարներու ժամանակ իմաց կու տայ իր քաղաքացիներուն:

Նման դրոյթներէն են ձեր պարզ հեռաձայնին լուր դրկելը կամ բջիջայինին Text Mesdsage-ինկի ձեւով իմաց տալը: Եթէ նման դրոյթ կայ, հասկցէք թէ ինչպէ՞ս կրնաք ձեր հեռախօսները արձանագրել անոր:

Եթէ մարմնային վնասուածքի հետեւանքով պատկերասփիւռին կամ ձայնասփիւռին չէք կրնար հետեւիլ, պէտք է լուրերը լսէք հեռախօսի կամ computer-ի միջոցաւ: Հեռաձայնային խօսակցութիւնները պէտք է կարճի կապէք՝ գիծերը չխճողելու համար: Պէտք է նաեւ լուրերը իմանալու այլ միջոց մը ունենաք, եթէ հեռախօսները չ'աշխատին: Օրինակ՝ մէկը որ ձեր մօտ կ'ապրի եւ նման պարագաներու ձեզ իմաց կրնայ տալ վթարներու մասին:



Յաւելումներ վթարի պարագային

Միայն մէկ անգամ 9-1-1 զանգահարեցէք վթարի մը պարագային: Նորութիւն մը պատահելուն դարձեալ մի՛ զանգահարէք: Շտապ օգնութեան մարմինները պէտք է իրենց գիծերը ազատ պահեն այլ վթարներու համար:

Վթարէն անմիջապէս ետք պատկերասփիւռդ կամ ձայնասփիւռդ բա՛ց նորութիւնները իմանալու համար:

Յիշեցէ՛ք...

Երբ հեռաձայնը կը գործածէք ձեր սիրելիները ստուգելու, հաճեցէք խօսակցութիւնը կարճ պահել: Եթէ ձեր զանգը չյաջողի, փորձեցէք text-ով կապուիլ անոնց հետ: